Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի տարեսկզբի մնացորդները և համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հայտերով նախատեսված ակնկալվող սուբվենցիան բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում ներառելու համար անհրաժեշտ է ֆոնդային մասի մուտքերը ավելացնել 337683.9 հազար դրամի չափով, որից՝ տարեսկզբի մնացորդը՝ 206564.7 հազ. դրամ (վարչական մասից՝ 70644.9հազար դրամ, ֆոնդային մասից՝ 135919.8 հազար դրամ) և ակնկալվող սուբվենցիան՝ 131119.2 հազար դրամ:

Համայնքի բյուջեի Ֆոնդային մասում ավելացված 337683.9 հազար դրամ մուտքերի հաշվին նախատեսվում է կատարել հետևյալ կապիտալ ծախսերը՝

	Անվանում	*գումար հազ. Դրամ*
1	Գրադարանի և ՄՊՄԿ-ի ջեռուցման համար նախատեսված ծախսերն ավելացնել	1525,0
2	5-10-րդ փողոցների և Արարատյան փողոցի մի հատվածի լուսավորման ցանցի կառուցման նախահաշվային աշխատանքների համար նախատեսված ծախսերը պակասեցնել	-220
3	Ճանապարհների խճապատման և հարթեցման աշխատանքների համար նախատեսված ծախսերն ավելացնել	1025,0
4	Ն. Թաղ 13 շենքի բակի բազմաֆունկցիոնալ խաղահրապարակի կառուցում	11636,0
5	Թիվ 1 մանկապարտեզի հիմնանորոգում	14798,1
6	Թիվ 5 մանկապարտեզի սյուների հիմնանորոգում	3680,0
7	Մանկապարտեզների համար գույքի ձեռք բերում	13462,6
8	Գրադարանի գրքային ֆոնդի համալրման համար գրականության ձեռք բերում	500,0
9	Համայնքի 3-րդ թաղ. 14, 18 շենքերի բակի բարեկարգման աշխատանքներ	22504,0
10	Բազմաբնակարան շենքերի բակերում տաղավարների կառուցում	998,0
11	Մասիս Կայարանի թիվ 12շենքի տանիքի հիմնանորոգում	5787,4

12	Թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում	60767,2
13	Քաղաքի 5-6-7-րդ թաղամասերում գազիֆիկացման աշխատանքներ	135727,8
14	5-10-րդ փողոցների և Արարատյան փողոցի մի հատվածի լուսավորության ցանցի կառուցում	64002,8
15	Ավտոճանապարհային նշանների տեղադրման և ճանապարհների գծանշման նախագծի ձեռք բերում.	1000,0
16	Նոր թաղամասի թիվ 16 շենքի բակի բարեկարգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	60.0
17	Աղբահանության վճարների գանձման և հաշվառման ծրագրի ձեռք բերում	200.0
18	Տեսադիտման համակարգի տեղադրման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	230.0
	Ընդամենը ծախսեր	***337683,9***

2019թ համայնքի բյուջեի վարչական մասում անհրաժեշտ է նախատեսել հետևյալ ծախսերը՝

1. Եվրասիական բանկի կողմից համայնքի ոռոգման ցանցի արդիականացման ծրագրին կապիտալ դրամաշնորհի հատկացում 8500.0հազար դրամ.
2. Բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգման համար 3250.0հազար դրամ:
3. Ճանապարհների ընթացիկ նորոգման համար՝ 7500.0հազար դրամ:
4. ՀԾ-հաշվապահ 7 ծրագրի սպասարկման վճար՝ 105.0 հազար դրամ:
5. Վերոնշյալ ծախսերն իրականացնելու համար անհրաժեշտ է վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 19355.0հազար դրամի չափով:

Աշխատակազմի քարտուղարի ժ/ա՝ Լ. Աստաբացյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան